ՈՒՇԱԳՐԱՎ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵԿ ՃՇԳՐՏՈՒՄ

ՊԱՎԵԼ ՋՈՐԱՆՅԱՆ

XVIII դ. սկզբի արցախահայոց ազատագրական շարժումների Արցախի հայ մելիքությունների պատմության ուսումնասիրության բնագավառում թեև մեծ աշխատանք է կատարվել, սակայն շատ հարցեր գեռևս բավարար հետազոտված չեն: Խոսքը վերաբերում է մասնավորապես ինչպես սղնախների ձևավորման և արտաքին ուժերի դեմ պայքարի կազմակերպման ընթացքում մելիքությունների միջև ստեղծված փոխհարաբերություններին, որը կարևոր դեր ուներ հաջողության հասնելու գործում, այնպես էլ մելիքների ու հայ զորավարների տոհմաբանությանը: Ավան հարյուրապետի՝ Ռուսաստանում գտնվող վրաց Վախթանգ VI-ին գրած նամակում նշվում է, որ նա Արցախից Բաքու է գնացել իր եղբոր՝ Թարխանի հետ: «...а ныне я, Аван юзбаши, и брат мой, Тархан юзбаши, прибыли в Баку, а оставили при армянском войске в сагнаге Ован юзбашу, Баги юзбашу, Абрам юзбашу, Авана юзбашу, а брата своего Тархана юзбашу и при нем господина Мелкона... послал я к его императорскому величеству»[1]. *Այս վկայության հիման վրա կարծիք է ձևավորվել, թե Ավան և Թարխան զորավարները եղել են եղբայրներ, որով և պետք է պայմանավորված լիներ նրանց հավատարիմ համագործակցությունը:*

Հավաքված վավերագրերում արտացոլված իրավիճակը հնարավորություն է տալիս արձանագրելու, որ մելիքների և զորավարների միջև փոխհարաբերությունները եղել են ոչ միանշանակ և զերծ չեն եղել հակասություններից՝ ինչպես արտաքին կողմնորոշումների, այնպես էլ իրենց իշխանական տիրապետության պահպանման համար մղած պայքարի առումով[2]: Այսպես, Արցախում գտնվող Իվան Կարապետ գեսպանագնացը 1724 թ. հուլիսի 18-ին գրելով, որ ինքը գտնվում է «Քարայգլխին սղնաղումն՝ Թարխան և Բաղի ուզբաշոնց քշտին», հաջորդ նամակում, որը ևս գրված էր նույն «Քարայգլխի նոր շինած ղալումն», նկարագրում է Արցախի ազատագրական ուժերի միջև առկա փոխհարաբերությունների մի հայտնի դրվագ, որը կարող է բանալի ծառայել որոշ այլ վավերագրերի հաղորդումների ճիշտ մեկնաբանման համար: Այդ հաղորդման հիման վրա է մասնավորապես ներկայացվում նաև չիրվանահայերի մասնակցության փաստը Արցախի ազատագրական պայքարին, ուստի և հարկ է բերել ամբողջական տեսքով: Իվան Կարապետը դրում է. «...Մելիք Բաղէրն, որ զզլբաշն էր ուզում, որ չիրվանըցոնց խէ /47/ գլխաւոր մարդիքն պատիվ

---

1 Армяно-русские отношения в первой трети XVIII века.— Сборник документов. Т. II, ч. II. Под редакцией Ашота Иоаннисяна, Ереван, 1967, с. 316, 320.

2 Լ. Ե. Երկերի ժողովածու. հ. 3, գիրք երկրորդ, Երևան, 1973, էջ 145: Армяно-русские отношения..., Т. II, ч. I. 1964, с. LIX—LXII. *Հայ ժողովրդի պատմություն. հ. IV, Երևան, 1972, էջ 152:*

էր կանչել, տարել խաբով տոնրն, Ա /1/-ին ղօնաղ էր տվել, որ դիշերըն յամէնքըն, ուր տան ղօնաղըն սպանել ին. և Ա /1/ էլ գոլըստանեցի Բ /2/ Եսային և ուր ախբէր Աբրայամն և Սարգիսն, որ Օսմանլուն ին ուզում, և Իսային Օսմանլվին ղօշունումն էր: Մեք որ գնացինք Ղափան, Եսային Օսմանլվէն եկէլ այ ուր ղալէն և մէլիք Բաղէրին հետ ղօվլան ավէլ, թէ Մէք մեր երկրումս որչանք որ չիրվանեցի կայ, կոտորենք. և թէ մեր երկրէն դուս առենք, երկիրն մեք ուտենք:

Եւ մեք Ղափանայ եկինք, տեսինք որ Եսայէ ախբէր Աբրայամն և Սարգիսն եկել ան քչերն ղօշունով մեծ սղնաղն կոխել ան և Թաբիան ուզբաշին ռանէլ ան և չիրվանրցոնց տնէրն թալանել ան և մեր իքմինրն էլ Թարխանի տանրն այ եղէլ, տարել ան: Էն Թարեղէն մինչ ի էս Թաբէղրս Եսային ախբէր ղօշուն այ հավաքում, բերում Թաբխանին վերայ կռիվ անում, յամէն գալոյ Բ-Գ /2-3/ մարդ ուրն էն որ սպանման այ, փախման այ, յեգ այ էրթում և ճանապարհին ինչ հայի գեղ որ Թարխանին թարէ այ, թալանում այ և տավարանին և ինչ օր ձեռն այ ընկաման տանում այ: Եւ մէլիք Բաղէրն ղօշուն այ հավաքել, Ավան ուզրաշոն հետ այ կռիվ առում. նայ էլ Ավանին գեղարէնքըն այ չավմիշ անում. յամէն օր էստոնց մէչն կռիվ այ:

Եւ էս Շիրվանայ տղէքըն ան էս երկիրս Քորգի ձեռնէ ազատել և Շիրվանայ տղէքըն՝ Թարխան ուզբաշին ուզում չէ կռիվ առնելն և մարդ կոտորելն, ասում այ, Հայ եան, ես գո՞ր կոտորեմ: Եւ թէ ուզի Ա /1/ օրումն կէկատորի: Ասում այ Եսայէ, Սարգսին և Արրայամին, թէ Յամէն մարդ ուր բաժնին ղաբուլ առի նստի, մինչի մեզ Ա /1/ մեծաւոը գայ: Եւ Եսային, Սարգիսն ղաբուլ չեն առում. գողի նման գալիս են գեղ չավմիշ անում. նայ էլ, մէլիքն էլ փախման ան ուրէնց ղալէն, և մոնչ օվ իմ խօսկն լսում չեն և բարըշում չեն. էսպէս յամէն օր կռիվ այ:

Եւ էս երկրիս ռռայաթին կէսն շիրվանրցին այ ուզում. ասում այ, թէ մեզ անհավատից ազատել այ, և փարային ասում ան, թէ մեր երկիրն այ, մեք կոտենք, գոք օվ էք:...

Եւ էս Ղարայբաղայ խալղին ղոյաթրն հասնում չեն շիրվանրցոնց սպանի կամ գոս անի էս երկրէս: Եւ թէ շիրվանրցին էս երկրէս, թէ էսօր գուս գնաց, յէքսն անհաւատրն գէգայ էս երկիրս գէզաֆտի և եսիր կանի»[3]:

Այս նամակից հստակ երևում է, որ «շիրվանեցիներ»[4] ասելով նկատի էին առնվում Թարխան և Ավան հարյուրապետները՝ իրենց զինակիցներով, որոնք Շիրվանից փոխադրվելով Արցախ, մեծ նպաստ էին բերել Արցախը օտարի լծից ազատելու գործին: Նրանք ամրացել էին երկու նշանավոր գավառների՝ Խաչենի և Վարանդայի բերդերում՝ Քաշաղլխում[5] և

3 Նամակը ստորագրել են Թարխան հարյուրապետը (ուզբաշի), Բաղին, Մելիք Գրիգորը, Սարգիսը, Բոզի հարյուրապետը և հոգևորականներ ու մի քանի «քեվխաներ»: Տե՛ս Армяно-русские отношения..., Т. II, ч. II, с. 186—188.

4 Շիրվանում հայ բնակչության և նրա զինական ուժի մասին ուշադրավ են դեռևս XVII դ. Ադամ Օլեարիուսի հաղորդումները, թե Շամախիի խանը դուրս էր բերել ավելի քան 2000-անոց զորք, որոնց մեծ մասը հայեր էին: Տե՛ս А. Олеарий. Описание путешествия. М., 1870, с.526.

5 Այդ բերդերի տարբեր լինելու մասին հիմնավորումը տե՛ս Պ. Չոբանյան. Շոշ և Քարագլուխ սղնախների նույնացման հարցի շուրջ.— «Պատմա-բանասիրական հանդես», 1994, № 1-2, էջ 183-187:

Շուշիում, ստանձնել դրանց պաշտպանությունը, որ պետք է լիներ միաժամանակ նշված գավառների տիրակալ մելիքների հետ համագործակցելով ու նրանց համաձայնությամբ: Ելնելով հենց միայն այս նամակում Մելիք Գրիգորի ստորագրության առկայությունից, կարող ենք արձանագրել, որ այդ պահին Խաչենի մելիքն էր նույն Գրիգորը, նա համակամ էր Թարխան հարյուրապետին, սակայն և ուշադրության արժանի փաստ է, որ նամակում առաջին տեղում է Թարխան հարյուրապետի ստորագրությունը: Առավել բարդ էր Ավան հարյուրապետի վիճակը, քանզի Վարանդայի մելիք Բաղերը որոշ ժամանակ չէր ընդունում իր իշխանության մեջ իր կամքին հակառակ կողմնորոշում որդեգրած զինվորականության քաղաքականությունը, պնդում էր իր պարսկամետ հակումների վրա և հարձակումներ գործելով կողոպտում Ավան զորապետին ենթակա բնակչությանը:

Պատահական չէր, անշուշտ, որ երբ Սարու Մուստաֆա փաշան օսմանյան բանակով հարձակվեց Շուշիի ամրոցի վրա և հաջողեց գրավել նրա մի մասը, Ավան հարյուրապետը, պաշտպանության շարունակումը թողնելով Օհան և Սիմոն հարյուրապետներին, ապաստանեց Թարխան հարյուրապետի մոտ[6]*, որտեղ իջևանել և գտնվում էր նաև Իվան Կարապետը: Այդ մասին հաղորդում է նույն Իվան Կարապետը Գ. Ի. Գոլովկինին 1726 թ. գրած իր նամակում. «(Սարու Մուստաֆա փաշան) Շամբախուց յետ դարձաւ, ուժով, ղուշումօվ և Հաջի Դավութ, ուր ախպէրն, ուր ղօշումօվն եկին Ավան ուղբաշուն սէղնաղին վերէն. Դ/4/ օրն կռիվ տվին: Դ /4/ օրնէն յետ Ավան ուղբաշին ուր սէղնաղինց դուս ելավ, եկավ իմ սէղնաղըն, որ է Թարխան և Բաղին և Սարգիս ուղբաշուն սէղնաղ էր: Ավան ուղբաշու դուս գոլէն յետ, Օհան և Սիմոն ուղբաշուն խետ Դ /4/ օր էլ կռիվ տվին, որ է դառցավ Ը /8/ օրն, մի/ն/չ ի սէղնաղին կէսն առին, խիղան ոխջ բալորեցին վերին սէղնաղ: Ներքի սաղնաղին որչան որ ձի և տավար կէր, տարան: Ը /8/ օր թօփօվ և ղումպարօվն կռիվ տվին, շատ մարդ կատորվեց: Ղախչաշմայ աղասին և յենդիչար աղասին էս կռվուն սէպանեցին: Էտ Բ /2/ մարդէն օր սպանեցին, Սարու Մուստայֆա փաշէն քշերօվ վեր կացաւ Բ/2/ օրէն ճանապարն Ա /1/ օր գնաց»*[7]*:*

---

6 Армяно-русские отношения..., Т. II, ч. II, с. 291. *Ճիշտ չէ գրքի առաջաբանում նշումը, իբր Ավան հարյուրապետը ապաստանել է Դիզակ գավառի Տողում (էջ LXXXIX), որովհետև Թարխանի սղնախը հաստատապես գտնվում էր Խաչենում և ոչ Դիզակում: Տողի ենթադրությունը, որի մասին ոչ մի վկայություն չկա, թելադրվել է միայն այն հանգամանքով, որ սխալմամբ Թարխանի Քարագլուխ ամրոցը նույնացվել է Քարի՝ նույն ինքն Շոշ- Շուշիի, բերդամրոցի հետ: Շուշին հայտնի էր միայն Քար անվանումով և ոչ Քարագլուխ:*

7 Նույն տեղում: Թուրք պատմիչ Իսմայիլ-Ասըմ Չելեբի-Զադեն, որ ժամանակակից էր իրադարձություններին (մահ. 1759թ.), հետևյալ ձևով է պատմում այդ մասին. «Տասնհինգ տարուց ի վեր ապստամբության վիճակում գտնվող և իրենց շրջանների կըզըլբաշական գյուղերը ավերող Սղնակի հայերը Գենջեի նվաճումից հետո, չնայած որ հպատակություն էին ցույց տվել /ՙՙ/ և օսմանյան կառավարության շնորհիվ խաղաղություն և ապահովություն ձեռք բերել, նորից ավազակություն էին սկսել և իրենց շրջանին մոտ գտնվող որոշ վայրերին վնասներ հասցրել: Երբ վերոհիշյալը (սերասքերը) Շամախիում էր գտնվում, նրանք (շիրվանահայերը—Պ. Չ.) հազարի չափ հեծելազորով եկել էին Սղնախի վրա, անհնազանդություն ցույց տվել և բռնություններ էին գործում: Այս բանը օրինակ հանդիսացավ Սղնախում մնացած ժողովրդի համար. երկիրը ավերվում և ռայաների վիճակը ծանրանում էր: Սղնախցիների պարագլուխը, Ավան անունով մի հայ, թնդանոթով և խումբարայով եկել և Սղնախի /Շուշի բերդ—Պ. Չ./ վրա ամրացել էր: Հաղթական բանակը

Ինչպես արցախյան ազատամարտի ողջ ընթացքի լուսաբանումից հայտնի է, հենց Ավան և Թարխան հարյուրապետներն էին հաստատակամորեն որդեգրել հակաթուրքական կոշտ դիրքորոշում և դրան հակադրել Ռուսաստանից օգնության և կամ մեկ որևէ այլ համախմբող ուժի սպասումը: Ի վերջո, երկու հարյուրապետները հուսահատ սպասումից հոգնած, անձամբ ուղևորվեցին Բաքու՝ ռուսական բանակի հրամանատարությունից պարզելու նրանց հետագա մտադրությունները: Նման համակամությունը և հավատարմությունը երկու գործիչների միջև վերածվել էր եղբայրական փոխվստահության և ընկալվել որպես հարազատ ինչպես իր ժամանակին, այնպես էլ արյունակից հետագայում[8]*: Վավերագրերի ուշադիր հետազոտությունից կարելի է միանշանակ պնդել, թե նշված տարիներին Արցախում Թարխան անունով մեկ այլ հարյուրապետ գոյություն չուներ: Ուստի խիստ ուշագրավ է Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող ձեռագիր ավետարաններից մեկում Թարխան հարյուրապետի ձեռքով կատարված գրառումը, որի առկայության մասին թեև նշել և ուշադրություն էր հրավիրել դեռևս ակադ. Լևոն Խաչիկյանը*[9]*, սակայն այն հետագայում չի օգտագործվել «չիրվանցի տղաների» կենսագրության լուսաբանման համար: Այդ փոքրիկ հիշատակարանը բերում ենք լրիվ. «Շնորհօք ամենազօրին աստուծոյ հօր ամենակալի և որդւոյն միածնի և շնորհաբաշխ սուրբ հոգւոյն ճշմարտի: Ես Թարխան ուզպաշիս, որ եմ տէր յերկրիս Խաչինու, ըստացա սուրբ աւետարանս յիշատակ ինձ և իմ ծընօղացն հօրն իմոյ Իսայխանին և մօրն իմոյ Հուսնին: Եւ հանգուցեալ եղբօրն իմոյ Սուրապին և միւս կենդանի եղբօրն իմոյ Յեաղուպին, և որդւոյն իմոյ Յօհանին եւ դստերն Փարիզադի, և ամուսնոյն իմոյ Սալվարին: Ի դուռն Խաչինուպտկի սուրբ Գէորգ զօրաւարին, ով ոք զսայ հանել ջանայ՝ իմոց թէ օտարաց, Գճ և ԺԸ հայրապետաց նզովան լինի, մասն և բաժին ընդ Կայենի և ընդ Յուդայի առցէ աստ և ի հանգերձեալ. ՌՃՀԵ /1726/ թվին»*[10]*:*

Հիշատակարանից պարզ է, որ Թարխան հարյուրապետը, որ արգեն /1726 թ./ իրեն համարում է Խաչենի տեր, Ավան (Հովհան, Հովհաննես) անունով եղբայր չի ունեցել, սակայն այդ անունը կրել է նրա որդին, որ գուցե և անվանակոչվել է ի սեր և ի հարգանս հենց Ավան հարյուրապետի: Որ «եղբայր» բառը օգտագործվում էր զինակից իմաստով, ցույց է

իր ղեկավարով Սղնախի գնդակի տակ գտնվող Շուշի գյուղը եկավ և հանկարծակի հարձակումով մինչև երեկո մի քանի թնդանոթով գնդակոծեց Սղնախներին: Այդ գիշերը սղնախցին (իմա՝ Ավանը—Պ. Չ.) իր տրամադրության տակ գտնվող հայերի հետ միասին փախավ: Հաջորդ օրը իսլամական զինվորները գրավեցին նրանց ինչքերն ու ապրանքները և փախստականներից ձեռք ընկած 400 անկրոն հայերի սպանեցին: Զմեռվա վերահաս ցրտերի պատճառով (սերասքերը) սղնախցիներին պատժելուց հետո, շարժվեց դեպի Գենջե և ձեռնարկեց նրա պաշտպանությունը ամրապնդելու գործին»: (Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին. թարգմանություն թուրքերեն բնագրերից, ներածությունով, ծանոթագրություններով, տերմինաբանական բառարանով և հավելվածով. հատոր Ա, կազմեց Ա. Խ. Սաֆրաստյան, Երևան, 1961, էջ 159):

8 Լ ե ո. Երկերի ժողովածու. հ. 3, 1973, էջ 173: Армяно-русские отношения..., Т. II, ч. I, с. XLIII.

9 «Ձեռագրի 248ա էջում կա «Խաչինու երկրի տէր» Թարխան յուզբաշու 1726 թ. գրված հիշատակարանը, որը պարունակում է նրա ընտանիքի անդամների և աղգականներից շատերի անունները»: Տե՛ս ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն երրորդ (1481-1500 թթ.), կազմեց Լ. Ս. Խ ա չ ի կ յ ա ն. Երևան, 1967, էջ 161 ծան.:

10 Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 8135, թ. 248ա:

տալիս Ավան, Ոհան, Պաղի հարյուրապետների կողմից ստորագրված ռուսական արքունիք ուղարկված մեկ այլ նամակ ևս, որտեղ եղբայր են անվանված նաև ուրիշները. «Մեր եղբայր Ամայուն և Բաղին, Թարխանին հայրն[11]*, տէր Մօսէսն, տէր Միքայելն, Եաւրին և այլ քանի մեզ թալուղ մարդիք դվինք էլէի Իվան Կարայբեդն...»*[12]*: Հարցի մեջ առավել պարզություն է մտցնում Իվան Կարապետի կողմից Եկատերինա I-ին Դերբենտից 1727 թ. մայիսի 9-ին գրած նամակը, որտեղ ասվում է. «Իվան Կարապետս, որ սղնաղէն եկի՝ Ավան ուզպաշի եղբայր Սիմօն ուզպաշին և Թարխանի հէր Իսախանն և Պաղի ուզպաշին, որ է մեզնով ԻԶ /26/ մարդ, եկինք Սալիան զօչունի խմար...Հիմա Պաղի ուզպաշին և Զալապի Քէվխէն աղարկէցինք քոյ հրամանոց զուլուղն, մէր ամէնայ հալ աֆալն սրանցանէ հարցանէս... »*[13]*: Ընդգծված վկայությունը հաստատում է ավետարանում եղած հիշատակարանի տեղեկությունը, որ Թարխան հարյուրապետի հոր անունը իրոք Իսախան էր և խոսք չի կարող լինել տարբեր Թարխանների մասին, ինչպես նշված է գրքի անվանացանկում (տե՛ս էջ 389) ժողովածուն կազմողների կողմից:*

Ոչ պակաս հետաքրքիր է Թարխան հարյուրապետի՝ Խաչենի տեր կոչվելու պարագան, որ մատնանշում է զինվորականության կողմից որոշ կալվածքներ և իշխանությունը սեփականելու հանգամանք և բացատրություն է դառնում ժառանգատեր մելիքների ու զինվորականության միջև ծագած հակամարտությունների լուսաբանման համար:

ИНТЕРЕСНОЕ СВИДЕТЕЛЬСТВО И ОДНО УТОЧНЕНИЕ

ПАВЕЛ ЧОБАНЯН

Резюме

В специальной литературе было принято считать, будто предводители армянской освободительной борьбы первой трети XVIII века – военачальники Аван и Тархан – были кровными братьями. Это мнение обосновывалось на заявлении самого военачальника Авана, который писал об этом в одном из писем, представленных русским властям. Это мнение казалось более чем убедительным, так как оба они были выходцами из Ширвана, вели согласованную политику и, наконец, вместе и отправились из Арцаха в Россию, надеясь получить военную помощь в борьбе против турецких завоевателей. В одном из Евангелий на армянском языке была обнаружена собственноручная памятная запись военачальника Тархана, в которой он перечисляет своих кровных родственников и членов своей семьи. Однако имя военачальника Авана в памятной записи отсутствует. Основываясь на этом факте, предполагается, что близкие взаимоотношения двух военачальников были следствием военно-политических убеждений, а не родственных связей.

---

11 Հրատարակության մեջ դրված է բութ, որը աղճատում է իմաստը՝ տեր Մովսեսը ընկալվում է որպես Թարխանի հայր, ուստի այն փոխարինեցինք ստորակետով:

12 Армяно-русские отношения..., Т. II, ч. II, с. 290.

13 Նույն տեղում, էջ 293: